

9177

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՅԻՏՈՒՏ

# ԾՐԱԳԻՐ

## ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԵՏՄՈՒԹՅԱՆ

9(47-925)  
Ծ-98

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՁՈՒԹՅՈՒՆ

01 SEP 2007  
31 AUG 2007

ՀԻՍՅ ՅԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

9(47.925)

Ծ-98  
աԿ

# ԾՐԱԳԻՐ

## ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԵՏԱՌԻԹՅԱՆ

—

10/1  
26

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

1989 թ.



2409  
39

### ԺՐԱԿԻՐ

## ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պատմությունը և նրա նշանակությունը:  
 Հայ ժողովրդի պատմությունը և նրա կապը հարեյան ժողովուրդների և ԽՍՀՄ-ի ժողովուրդների պատմության հետ: ԺԿ Խորհի, Համ. Կ(բ) Կ. Կ Կոմի 1934 թ. մայիսի 16-ի վորոշումը քաղաքացիական պատմության դասավանդման մասին: Ընկեր Ստալինի, Կիրովի, ժգանովի գիտությունները պատմության հարցերի մասին: Հայ ժողովրդի պատմության ֆալսիֆիկացիայի՝ սպեցիֆիկյան -բուրժուա-նացիոնալիստական պատմագրության քննադատությունը և հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության բնագավառում մեր առաջ դրված խնդիրները:

### ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

- ա) Հայ մատենագրություն:
- բ) Հունտ-հռոմեական մատենագրություն:
- գ) Արևելյան մատենագրություն (արաբական, ասորական, պարսկական, վրացական և այլն):
- դ) Արձանագրություններ (սեպագիր և վիճագիր):
- ե) Հնագիտական, լեզվաբանական, ազգագրական տվյալներ:
- զ) Արխիվային նյութեր:

### 1. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՐԽԱՅԻԿ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Հայաստանի աշխարհագրական միջավայրը:  
 Պայելիտը Անդրկովկասում: Մառցադաշտային ուժի: Մարդկային բնակության գոյացումը հայկական լեռնաշխարհում: Տոտեմական հասարակություն:

Նեոլիտ:—Նեոլիտյան հուշարձաններ: Անասնապահութեան և յերկրագործութեան յերեւոյթ: Տոնձային հասարակութեան: Պատրիարխատ: Պատրիարխատի սկզբնավորումը:

Բրոնզե դար: Բրոնզեդարյան հուշարձաններ: Յերկրագործութեան և անասնապահութեան հետազոտարդացումը:

Պատրիարխատական տոնձի վերջնական ձեւավորումը:

Տոնձատիրական հասարակութեան քայքայման սկզբնավորումը: Դասակարգային հասարակութեան առաջացումը:

Վաղագույն յերկաթի դար:

## 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆԱԳՈՒՅՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի հնագույն բնակիչները՝ սուրբարիներ, խարիմետանիներ և նայիրցիներ (շուրջ 3000—900 թ. թ. մեր տարեգրութեանից առաջ): Սրանց բնակավայրերը, զբաղմունքը, հասարակական տնտեսական կառուցվածքն ըստ սեպագիր արձանագրութեանների և նյութական կուլտուրայի մնացորդների: Ասորիստանի արշավանքները նայիրյան ժողովուրդների վրա: Տոնձական կարգերի քայքայումը նայիրյան ժողովուրդների մոտ, դասակարգերի, ձեւավորումը այդ ժողովուրդների մոտ և պետութեան կազմավորումը:

Սալթուրարտական պետութեանը (885—585 թ. թ.), սրա ձեւավորումը Բիայնայում: Ասորիստանի և խալդուրարտական պետութեան պատերազմները: Ասորիստանի թուլացումն ու խալդուրարտական պետութեան հզորացումը 8-րդ դարում: Մենուաս Ա-ի (805—780 թ.), Արգիշտի Ա-ի (760—755 թ.), Սարգուրի Բ-ի (755—736) և Ռուսա Ա-ի (736—714) նվաճումները (805—714) և Հայկական բարձրավանդակի հիմնական մասերի ընդգրկումը խալդուրարտական պետութեան սահմաններուն, նվաճվող ժողովրդի զերեկվարումն ու ստրկացումը: Արմավիր քաղաքի հիմնադրումը Արարատյան դաշտում:

Տնտեսական կյանքը խալդուրարտական պետութեան ժամանակ—գյուղատնտեսութեան և արհեստների զարգացումը, ջրանցքային արարութեան զարգացումը, սրտ նշանակութեանը, այգեգործութեան և հացահատիկների մշակման համար: Արհեստներն ու նրանց արտադրանքները յերկաթա-

գործութեան, վոսկերչութեան, զինագործութեան, քարափորութեան և այլն: Արհեստն ու վաճառականութեանը:

Դասակարգերն ու դասակարգային փոխադարձութեանները խալդուրարտական պետութեան մեջ: Ռադիկալներ և քրմերի դասակարգը վորպես արքայ և շահագործող դասակարգ: Սարուհներն ու գյուղացիութեանը վորպես շահագործող դասակարգեր: Պետութեան միապետական ընդլայնումը: Սալթուրարտական պետութեան թուլացումն ու անկումը (585 թ.) և անկման պատճառները: Կիմերների և սկյութների արշավանքները:

Մեդացիներ:

Սալթուրարտական կուլտուրան.—խալդական սեպագրութեանը: Այդ սեպագիր արձանագրութեանների արժեքն ու նշանակութեանը Մերձավոր Արևելքի վաղ անցյալի պատմութեան ուսումնասիրութեան համար:

Շինարարական արվեստի զարգացումը ու քանդակագործութեանը: Սալթուրի կրոնը, խալդական աստվածները: Սալթուստվածն իբրև աստվածների հայր, ջրի պաշտպանը:

Հին արևելքի կուլտուրայի ազդեցութեանը խալդ կան կուլտուրայի վրա: Սալթուրարտական կուլտուրայի հշանակութեանը հետազոտում հայկական և վրացական կուլտուրայի զարգացման համար:

## 3. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ

(6-ից 4-րդ դարեր)

ա) Հայաստանը Ա. Բենեդյան Պարսկաստանի գերիշխանության ներքին

(550—330 թ. թ.)

Սալթուրարտական պետութեան նվաճումը մեդացիների կողմից: Արմենների ասպարեզ գալը:

Արմենիայի առաջացումը: Պարսկաստանում Ա. Բենեդյան պետութեան հաստատումը Կյուրոսի ժամանակ (558—529) և մեդական իշխանութեան տապալումը: Հայկական բարձրավանդակը աքեմենյան Պարսկաստանի գերիշխանութեան ներքո: Արմեններն ու Արմենիան ըստ Հերոդոտի: Արմենների բնակու-

Թյան վայրը, արմենների և խալդերի միջև թշնամական փոխհարաբերությունների վերացումն ու այդ ցեղերի աստիճանաբար մերձեցումը: Արմենների ապստամբությունն աքեմենյան Պարսկաստանի տիրապետության դեմ: Ապստամբության ճնշումը և Իհիհիստունի արձանագրությունը արմենների մասին, այդ արձանագրությունը վորպես առաջին հաստատուն տեղեկություն արմենների մասին:

Դարեն Ա-ի (522—484) անցկացրած բարենորոգումները և նրանց նշանակությունը Հայկական բարձրավանդակի բնակիչների մեջ դասակարգային նոր հարաբերությունների խորացման և տնտեսական կյանքի զարգացման համար: Հայկական բարձրավանդակը վորպես 13 և 18-րդ սատրապություններ: Ճանապարհների կանոնավորումը, արքայական պողոտայի անցկացումը, փոխանակության ուժեղացումը, դրամի կարումը: Դասակարգային հարաբերությունների խորացումը Հայաստանի բնակչության մեջ: Արմենների, խալդերի և Հայաստանի այլ ցեղերի շփման ուժեղացումը ու միաձուլումը: Հայ ժողովրդի կազմավորումը:

Հայ ժողովրդի ծագման մասին յեղած բուրժուական ուսուսայական տեսության քննադատությունը:

Հայաստանը Քսենոֆոնի և հույն զորքերի նահանջի ժամանակ (401—400 թ. թ.) հույն զորքերի նահանջի ճանապարհը Հայաստանի վրայով: Հայերի տնտեսական և դասակարգային կառուցվածքն ըստ Քսենոֆոնի: Հայաստանի գյուղի նկարագրությունը Քսենոֆոնի մոտ: Իրանի կուլտուրայի, լեզվի և կրոնի ազդեցությունը նոր ձեվավորված հայերի վրա:

#### բ) Հայաստանը սելեվկյան սիրապետության ներքին (330—180)

Հունաստանի միացումը Մակեդոնիային, Ալեքսանդր Մեծի (336—323 թ. թ.) արշավանքները (334—326) և Աքեմենյան պետության նվաճումը: Մակեդոնական աշխարհակալությունը Ալեքսանդր Մակեդոնացու մահից (323) հետո.— Պետության բաժանումը յերեք մասի՝ Մակեդոնիան և Հունաստանը, Յեզիդատոսը և Սելեվկյան իշխանությունը: Հելենիստական կուլտուրայի առաջացումը վորպես հունական և արևելյան կուլտուրայի սինթեզը:

Հայաստանի նվաճումը Մակեդոնացու կողմից, այդ նվաճման ամրապնդումը Սելեվկյան պետության կողմից:

Հայկական բարձրավանդակը հելենիստական քաղաքակրթության շրջանում. փոխանակության, առևարի աշխուժացումը, քաղաքների հիմնումը, դրամական շրջանառության աշխուժացումը:

Մեծ Հայքն ու Ծոփքը Սելեվկյան տիրապետության շրջանում: Սելեվկյան պետության աստիճանական քայքայումը: Պարթևների դինաստիայի հիմնումն Իրանում (250): Հռոմի աշխարհակալության ծավալումը:

Հունաստանի գրավումը հռոմեացիների կողմից, հռոմեական բանակները Փոքր Ասիայում, Մագնեզիայի ճակատամարտը վորպես առիթ հայերի և պոնդացիների ապստամբությանը Սելեվկյան իշխանության դեմ: Հայկական յերկու թագավորությունների հիմնումը Հայաստանում և հայերի ազատվելը սելեվկյան տիրապետությունից:

#### 4. ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՅԵՎ ՆՐԱ ՊԱՅՔԱՐԸ ՀՈՒՍԻ ՅԵՎ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԴԵՄ

##### ա) Արտաշեսյան հարսությունը (189—1)

Արտաշես Ա-ի (189—161) և Զարեհի (189—163) թագավորությունները Հայաստանում: Արտաշատ մայրաքաղաքի կառուցումն Արարատյան դաշտում: Արտաշեսի և Զարեհի նվաճումները: Արտաշեսյան հարսությունից փորձերը Հայաստանում մի պետություն ստեղծելու համար:

Հայաստանը Արտաշես Ա-ից հետո մինչև առաջին դարի սկիզբը:

Հայաստանը Տիգրան Բ-ի ժամանակ (95—55).—Առաջավոր Ասիայի քաղաքական կացությունը 2-րդ դարի վերջում և առաջին դարի սկզբում:

Պոնտոսի պետությունը և նրա հղորացումը Միհրդատ Ե-րդի ժամանակ (128—63): Փոքր Հայքի միացումը Պոնտոսին (112 թ.): Միհրդատի և Տիգրան Բ-ի դաշինքը վորպես յերկու պետությունների միացյալ պայքարն ընդդեմ ստրկատիրական Հռոմի Ծովից թագավորության միացումը Մեծ Հայքին (93) և Հա-

յաստանի միավորումը հայկական մի պետութեան մեջ: Արտաշես-  
յան հարստութեան ամրացումը:

Հռոմեական հանրապետութեան և Պարթևական Իրանի  
ներքին ծանր դրութիւնը, այդ յերկրների ներքին ծանր կա-  
ցութիւնը վերպես նպաստավոր պայման Հայաստանի և Պոնտոսի  
նվաճումների համար:

Միհրդատ Պոնտացու և Տիգրան Բ-ի նվաճումների սկիզբը.—  
կռիվները Կապադովկիայում: Սուլլայի արշավանքը (92), առաջին  
Միհրդատյան պատերազմը (92—84):

Ստրուկների ապստամբութիւնը Փոքր Ասիայում և Հու-  
նաստանում: Այդ ապստամբութիւնների ոգտադործումը Միհրդ-  
ատի և Տիգրանի կողմից: Միհրդատի և Տիգրանի նվաճումները  
Հռոմի և Պարթևների յենթակա տերիտորիաներում: Տիգրան  
Բ-ի հետագա նվաճումները Հայաստանի հարավ-արևմտյան մա-  
սերում:

Տիգրան Բ-ի միջոցառումները պետութեան ամրապնդման  
համար, բզեշխութիւնները Հայաստանում:

Բանակը և նրա կազմակերպութիւնը: Տիգրանակերտ  
մայրաքաղաքի հիմնումը Հայաստանի հարավում: Տիգրանակեր-  
տը վոչ միայն վարչական, այլ և տնտեսական կենտրոն: Գաղ-  
թականների ներմուծումը Հայաստան՝ Հյուսիսային Միջագետ-  
քից, Կապադովկիայից և Միջերկրականի ծովափնյա քաղաքնե-  
րից:

Տիգրանի վարած քաղաքականութիւնը նվաճած յերկրնե-  
րի և Հայաստան բերված գաղթականների հանդեպ:

Միհրդատյան 2-րդ պատերազմը (72—68):

Լուկուլլոսի հաղթութիւնները Փոքր Ասիայում և Պոնտո-  
սում: Նրա արշավանքը դեպի Հայաստան, առաջին ընդհարումնե-  
րը, Տիգրանի բանակի պարտութիւնը, Տիգրանակերտի գրավու-  
մը, Լուկուլլոսի անհաջող արշավանքը դեպի Արտաշատ և ժողո-  
վորդի համառ պայքարը նրա դեմ և Հռոմեական զորքի դուրս  
մղումը Հայաստանից: Միհրդատ Պոնտացին նորից գրավում և  
Պոնտոսը, իսկ Տիգրանը՝ Կապադովկիան: Լուկուլլոսի բանակի  
վերջնական պարտութիւնը:

Ստրուկների ապստամբութեան և քաղաքացիական կը-  
ռիվների աստիճանական թուլացումը Հռոմում: Պոմպոսի արշա-  
վանքը և 3-րդ Միհրդատյան պատերազմը (67—63):

Ներքին յերկպառակութիւնները Հայաստանում և Պոնտո-  
սում: Հայ-պոնտական դաշինքի թուլացումը:

Պարթևների արշավանքը դեպի Հայաստան.— Պարթևա-  
հռոմեական դաշինքն ընդդեմ Հայաստանի և Պոնտոսի: Միհրդ-  
ատ Պոնտացու պարտութիւնը և փախուստը: Տիգրան Բ-ի հաջ-  
տութիւնը Պոմպոսի հետ (65):

Արտաշեսյան պետութեան տերիտորիալ անդամահատումը:  
Հայաստանի հզորութեան թուլացումը: Տիգրան Բ-ի մահը (55):

Հայաստանն առաջին գարի յերկրորդ կեսին մ. ա. առաջ.—  
Արտավազդ Բ-ի (55—33) ձգտումը 65 թվի դաշնադրութիւնը  
չեղյալ հայտարարելու համար: Կրասոսի անհաջող արշավանքն  
Արևելքում:

Հայաստանի դաշնակցութիւնն Իրանի հետ: Կրասոսի պարտու-  
թիւնը և 65 թվի դաշնադրութեան չեղյալ հայտարարումն Արտա-  
վազդի կողմից: Արտավազդի փորձերը վերականգնելու Հայաստանի  
նախկին հզորութիւնը: Պարթևների արշավանքներն Ասորիքում  
Հայաստանի մասնակցութեամբ: Հրեաների գաղթեցումը Հայաս-  
տան (40): Անտոնիոսի արշավանքը և Հայաստանի նվաճումը:  
Արտավազդ Բ-ի ձերբակալումը Անտոնիոսի կողմից (33): Հա-  
յաստան հռոմեական ազդեցութեան սփերա:

Ապստամբութիւնը Հայաստանում Հռոմի դեմ, հռոմեական  
զորքերի դուրս քշումը Հայաստանից: Արտաշես Բ. (33—20) և  
նրա հաջորդները, Տիգրան Գ. (20—4), Տիգրան Դ. և Յերազո  
(4—1): Հռոմեական կայսրութեան քաղաքականութիւնը Հայաս-  
տանը պրովինցիայի վերածելու: Արտաշեսյան հարստութեան թու-  
լացումն ու անկումը մեր տարեգրութեան սկզբին և անկման  
պատճառները:

Հայաստանի սոցիալ-տնտեսական դրութիւնը Արտաշեսյան  
հարստութեան ժամանակաշրջանում: Ռազմական և քրմական  
դասերը վերպես յերկրի շահագործող և տիրապետող դասակա-  
րը:

Գյուղացիութիւնը և նրա ծանր վիճակը: Ռենտայի և պե-  
տական հարկի միացյալ գանձումը դյուզացիներից, վորպես պար-  
տավորութիւն: Ասիական արտադրայինակը Հայաստանում  
այս ժամանակաշրջանում: Ստրկական աշխատանքի շահագործու-  
մը: Առեկտուրը և արհեստագործութիւնը, քաղաքները (Արտա-

շատ, Տիգրանակերտ, Արշամոշատ)։ Քաղաքների բնույթը և նրանց միջազգային առեվարական նշանակությունը։ Արեվելքի և արևմտաքի տրանզիտային առեվարական ճանապարհը Հայաստանի վրայով։

Հայաստանից արտահանվող և Հայաստան ներմուծվող ապրանքները։

Հելենիստական կուլտուրայի ազդեցությունը հայերի վրա։ Արտավազդ Բ. վորպես դրամատուրգ։

## բ) Արեւիկունի հարսուլթյունը Հայաստանում (66—429)

Հայաստանի քաղաքական դրությունը 1-ին դարի 1-ին կեսին։ Հայաստանը վորպես պատերազմների թատերաբեմ Հռոմի և Պարսկաստանի միջև։ Հայաստանի տնտեսական ու ուղղափառատեգիական զիրքի նշանակությունը հարևան յերկրների համար։ Հարեվան պետությունների ջանքերը Հայաստանը գրավելու իրենց կողմը։ Հայաստանի մշտական մասնակցությունն այդ պետությունների կոնֆլիկտներին։ յերկրի պարբերական ավերումը։

Հայաստանը Հռոմի ազդեցության ներքո։ Պարթևիկների միջամտությունները Հայաստանի ներքին գործերին։ Հռոմի և Պարսկաստանի կոնֆլիկտները Հայաստանի և Մերձավոր Արեւելքի շուրջը (1—63) և հիսուսամյա խառն շրջանը։

Պարսկաստանի ուժեղացումը Վաղարշ Ա-ի ժամանակ և նրա միջամտությունը Հայաստանի գործերին։ Տրդատ զորավարը Հայաստանում և հայերի ապստամբությունը հռոմեացիների դեմ, այդ ապստամբության ողբագործումը Տրդատի կողմից։

Կորբուլունի և Պետոսի արշավանքները (58—63)։

Կորբուլունի արշավանքը (59—60) և Արտաշատի ավերումը։ Տրդատ զորավարի վերադարձը Հայաստան և հայերի նոր ապստամբությունը Հռոմի և Տիգրան Զ-ի դեմ (60—61)։ Պետոսի արշավանքը (61—62) և պարտությունը։ Կորբուլունի նոր արշավանքը և յերեք դաշնագրությունները (61, 62 և 63 թ. թ.)։ 63 թ-ի Ռոմեոյի դաշնագրությունը։ Հայաստանի աշատագրումը Հռոմի և Պարսկաստանի գերիշխանություններից։

Արշակունի հարստության հիմնումը Հայաստանում (63) և

Հայաստանի քաղաքական իշխանությունի վերականգնումը։ Տրդատի մեկնումը Հռոմ և վերադարձը Հայաստան (65—66)։

Տրդատ Ա-ի (63—100) և արշակունիների ջանքերը Հայաստանի պետականության ամրացման համար։

Արտաշատ մայրաքաղաքի վերաշինումը։ Տնտեսական կյանքի զարգացումը։ Քաղաքները, արհեստները և առևտուրը առաջին դարի 2-րդ կեսին։ Հյուսիսային ցեղերի (Ալլանների) արշավանքը դեպի Հայաստան (72)։ Հռոմի նվաճողական քաղաքականությունն Արեւելքում և Հայաստանը պրովինցիա դարձնելու ձգտումները յերկրորդ դարում և յերրորդ դարի առաջին քառորդին (114—117, 161—164, 211—217)։

Հայաստանի դիմադրությունը Հռոմին և վերջինի անհաջողությունը։ Կարակալայի արշավանքներն Արեւելքում, Հայաստանը նվաճելու նրա փորձերը և Հայաստանի դիմադրությունը, հռոմեական կայսրության անհաջողությունը, հռոմեական զորքերի դուրս վանումը Հայաստանից, ապստամբություն հռոմեական բանակում և Կարակալայի սպանությունը։ Տրդատ Բ. (217—222) և Արշակունիների թագավորության վերականգնումը։

Պարսկաստանում Պարթևական դինաստիայի անկումն ու Մասանյանների տիրապետության հաստատումը (226)։

Մասանյան Պարսկաստանի քաղաքացան, վարչական և կուլտուրական առանձնահատկությունները, պետության միապետական բնույթը։ Պարսկական նոր դինաստիայի ներքին և արտաքին քաղաքականությունը։ Մասանյանների նվաճողական քաղաքականությունը Հայաստանի հանդեպ։ Հայաստանի դիրքը Մասանյան Պարսկաստանի նկատմամբ։ Արտաշիլի (226—242) և Շապուհի (242—272) արշավանքները դեպի Հայաստան, վերջինիս դիմադրությունը։ Հայաստանի գրավումը Մասանյանների կողմից (251)։ Հայաստանը Մասանյան իշխանության ներքո (251—297)։

Պարսկահռոմեական պետությունների կոնֆլիկտը 3-րդ դարում։ Հայաստանի դիրքն այդ կոնֆլիկտի ժամանակ։ Հռոմեական կայսրության վիճակը 3-րդ դարում և 4-րդ դարի սկզբում, սարուկների ապստամբությունը։ Պարսկահռոմեական պատերազմները 3-րդ դարի վերջում (367—397)։ Հայաստանի ապստամբությունը Մասանյան Իրանի դեմ։ Գիտկեպտիանոս կայս-

րի հաշտութիւնը (297 թ.) Պարսկաստանի հետ: Տրդատ Գ. (297—330) և հայ Արշակունի հարստութեան վերահաստատումը Հայաստանում: Քրիստոնէսութեան մուտքը Հայաստան:

#### գ) Հայաստանի քաղաքական դրութիւնը չորրորդ դարում

Սասանյան Պարսկաստանի վարած քաղաքականութիւնը Հայաստանի նկատմամբ Պոսթոլ Բ. (330—339) և նրա կառարած ձեռնարկումները: Շապուհի արշավանքները գեպի հռոմեական պրովինցիաներն ու Հայաստանը:

Հայաստանի ղեկավարութիւնը: Յերկրի կենտրոնախույս ուժերի ուժեղացումը: Այդ ուժերի սպասարժումն արտաքին պետութիւնների կողմից, գլուղացիութեան դժգոհութիւնները: Արիստակեսի սպանութիւնը:

Արշակունի պետութեան ներքին հակասութիւնները, կենտրոնաձիգ և կենտրոնախույս ուժերի պայքարը. պայքարի սոցիալ-քաղաքական հիմքերը: Յեկեղեցին վորպես կենտրոնախույս ուժերի կազմակերպիչ: Տիրանի (339—350), Արշակի (350—368) և Պապի (368—374) վարած քաղաքականութիւնը կենտրոնացած պետութիւն ստեղծելու համար:

Ներսես կաթողիկոսը (352—472). Աշտիշատի ժողովը, յեկեղեցական կանոնների մշակումը: Յեկեղեցու ազդեցութեան առտիճանական ուժեղացումը: Արշակ Բ. և նրա վարած ներքին ու արտաքին քաղաքականութիւնը: Դասակարգային պայքարի սրումը Արշակ Բ-ի ժամանակ: Արշակավան քաղաքի հիմնումը, հիմնման պատճառները: Արշակավանում ապաստանող ընակիչների և նախարարների միջև յեղած կռիվը վորպես դասակարգային պայքարի արտահայտութիւն:

Պարսկահռոմեական պատերազմները (358—363) Հյուսիսային Միջագետքի և Հայաստանի շուրջը: Արշակունի պետութեան դիրքն այդ պատերազմների ժամանակ: 363 թ. կնքած դաշնագրութիւնը, դաշնագրութեան բացասական նշանակութիւնը Հայաստանի համար:

Շապուհ Բ-ի (310—379) արշավանքները գեպի Հայաստան, վերջինիս համառ ղեկավարութիւնը: Հայաստանի պարտութիւնը և յերկրի ավերումը պարսիկների կողմից:

Պապը և նրա հաղթական կռիվները: Յերկրի ազգաբնակչութեան լայն ոժանդակութիւնը Պապին ընդդեմ Սասանյանների: Պապի վարած ներքին և արտաքին քաղաքականութիւնը: Պապի ռեֆորմները յեկեղեցու նկատմամբ: Պապի սպանութիւնը: Ներքին հակասութիւնների սրումը: Վարապրատը (374—377) և նրա պայքարը Մամիկոնյանների ու կաթողիկոսութեան դեմ: Արտաքին ուժերի նոր դասավորումը 380-ական թվականներին:

Արշակունի պետութեան թուլացումը: 387 թվի Յիզբունի դաշնագրութիւնը և Հայաստանի առաջին բաժանումը Պարսկաստանի և Հռոմի միջև:

Հռոմեական կայսրութեան թուլացումն ու բաժանումը յերկու մասի 4-րդ դարի վերջում: Բյուզանդական կայսրութեան հիմնումը: Այդ կայսրութեան քաղաքական, տնտեսական ու կուլտուրական անանձնահատկութիւնները:

Կոնստանտին և պատրոնատի դարգացումը:

Հայաստանի քաղաքական կացութիւնը 387 թ. բաժանումից հետո, Արշակունի թագավորութեան վերացումը արևմտյան Հայաստանում: Արևմտյան Հայաստանը Բյուզանդական կայսրութեան մի նահանգ:

Արեւելյան Հայաստանի քաղաքական և տնտեսական դրութիւնը 4-րդ դարի վերջին և 5-րդ դարի առաջին քառորդին. առեւտրի ու քաղաքների անկումը: Այդ անկումը վորպես հետեւանք Շապուհի կատարած ավերումների: Վուամշապուհը (391—415) և Սասանյան Պարսկաստանի վարած մեղծ քաղաքականութեան պատճառները:

Հայերին գրբի ստեղծումը (404—412):

Դասակարգային պայքարի սրումը 5-րդ դարի առաջին քառորդում: Բորբորիտոնների շարժումը: Այդ շարժման սոցիալ-տնտեսական նախադրայինը: Բորբորիտոնների առաջադրած խնդիրները: Շարժման ընթացքը և Բյուզանդիոնի դերը շարժման ճնշման դործում: Արշակունի թագավորութեան դրութիւնը 5-րդ դարի 20-ական թվականներին: Սասանյանների դիրքը: Արշակունի թագավորութեան վերացումը Հայաստանում (429) և վերացման պատճառները:



## դ) Ֆեոդալիզմի ձեվավորումն Հայաստանում

Ֆեոդալական հասարակարգի վերջնական հաստատումը Հայաստանում 3—4 դարերում: Հողն իբրև ֆեոդալական սեփականություն: Հողի պայմանական սեփականատիրությունը 4-րդ դարում: «Ի սպասի ծառայություն», «Սոստակ» (ֆեոդ): «Յերկիրք հայրենականք», «Յիրկիրք պարզեվականք» և «Յերկիրք քսակաղինք» իբրև հողի ֆեոդալական սեփականության առաջացման յեղանակներ: Հողի պետական սեփականություն լինելու հարցը: Յերկու հիմնական դասակարգերը՝ ֆեոդալ-նախարարները և ձորագյուղացիները: Հայաստանի ֆեոդալական նախարարական կազմակերպության ընդհանուր բնույթն ու առանձնահատկությունները, նախարարների պարտավորություններն Արշակունի թագավորների հանդեպ. նախարարների իրավունքների ժառանգական բնույթը: Հայ նախարարների և Արշակունիների փոխհարաբերություններն իբրև վասալի և սուվերենի փոխհարաբերություն:

Ռամիկների (շինականներ ու քաղաքի բնակչություն) պարտավորությունները—«Ի հարկի ծառայություն»: Դյուղացիություն շահագործման յեղանակը և չափը: Արգյունավրձար օճանտան իբրև շահագործման հիմնական ձև: Ջրի պարտադիր աշխատանք: Դյուղացիության իրավաքաղաքական վիճակը: Ստրուկներ:

Առևտուրն ու արհեստները, քաղաքները (Արտաշատ, Վաղարշապատ, Յերվանդաշատ, Վաղարշավան, Զարեշատ) Արշակունիների ժամանակաշրջանում: Քաղաքների բնույթը: Արտաշատ ու Վաղարշապատ քաղաքների դերը միջազգային առևտրի մեջ: Միջազգային առևտրի նշանակությունը քաղաքների զարգացման համար. ներքին առևտրի վիճակը: Արհեստներն ու նրանց տեսակները. արհեստավորների իրավաքաղաքական դրությունը:

Ֆեոդալական հասարակարգի հիմքը՝ խոշոր հողատիրություն և մանր արտադրություն: Յերկրի տնտեսության նատուրալ բնույթը:

## ե) ԿՈՒՆՏՈՒՐԱՆ

Կուլտուրան.—Հայաստանի նախաքրիստոնեական շրջանի կուլտուրան: Դողթան յերգիչներն ու յերգերը. գուսանական խմբերը, պարարվեստը. կիթառի, տավիղի, սրնգի գործածու-

թյունը: Թատրոնն ու յերաժշտությունը: Ճարտարապետական արվեստը. Գառնիի հեթանոսական տաճարը:

Բանավոր գրականություն. ժող. վեպը: Գրերի գործածություն հարցը Արտաշեսյան ու Արշակունի թագավորությունների ժամանակ:

Կրոն.—Ա. Հեքսանոսական կրոն.—Հայկական պանթեոնը. Աստվածություններն ու նրանց պաշտամունքները:

Հելենիստական կուլտուրայի հետ հունական աստվածությունների պաշտամունքի տարածումը Հայաստանում:

Իրանական կրոնական հայացքների— զրադաշտականությունից ազդեցությունը հայկական հեթանոսական կրոնի վրա: Արամազդ, Անահիդ, Միհր և այլ աստվածներ:

Մեհյաններն ու տաճարները, քրմերի դասը, մեհյանական հարստությունները:

Բ. Քրիստոնեությունը.—Քրիստոնեության ծագումն ու զարգացումը: Նրա զարգացման եվոլյուցիան, քրիստոնեության պետական կրոն դառնալը Կայսրությունից 313 թ. Միլանի հրովարտակից հետո:

Քրիստոնեա քարոզիչների մուտքը Հայաստան 2—3-րդ դարերում: Գրիգոր Լուսավորիչի և Տրդատ թագավորի վեպը Հայաստանում քրիստոնեության տարածման պատմության մեջ:

Քրիստոնեությունը պետական կրոն հայտարարվելը Հայաստանում 4-րդ դարի սուղին քառորդին և նրա պրոգրեսիվ նշանակությունը: Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հայտարարելու սոցիալական և քաղաքական շարժառիթները: Քրիստոնեությունը Հայաստանում հաղթանակեց վորպես ֆեոդալական իդեոլոգիա:

Քրիստոնեական կրոնի պայքարը հեթանոսական կրոնի դեմ: Տարոնի պատերազմը.—վեպ: Հեթանոսական կրոնի վորոշ տարրերի մուտքը քրիստոնեության մեջ: Վանքերի հիմնումը և քրիստոնեության տարածումը: Յեկեղեցիի մեհյանական հարստության ժառանգ: Յեկեղեցին վորպես ֆեոդալական լավաճատեր: Բուրժուական պատմագրության տեղեկեցիոց մտեսցումը քրիստոնեության ընդունման խնդրում և նրա քննադատությունը:

Հայերեն գրերի ստեղծումը և ստեղծման նախադրյալները:

Մերոնը Մաշտոցը: Հայկական դրերի ստեղծման խոշոր նշանակութիւնը հայկական կուլտուրայի զարգացման համար: Հայկական գրականութեան ստեղծումը:

Վանքերն ու յեկեղեցիները, վորպես վող միջնադարի դրի ու գրականութեան զարգացման և պահպանման կենտրոններ:

### 5. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՅԵՎ ԲՅՈՒՋԱՆԴԻԱՅԻ ԳԵՐԻՇԻԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ (5--7 Դ. Դ.)

#### ա) Մարզպանական Հայասանը (429—640), Հայասանի ապստամբութիւնները Պարսկաստանի դեմ 5—6-րդ դարերում

Հայաստանը վորպես մարզպանութիւն: Պարսիկ մարզպանները Հայաստանում: Նրանց պարտականութիւնները:

Հայաստանի ներքին ինքնավար դրութիւնը մինչև Հազկերտ Բ-ը (439—457). Սասանյան Պարսկաստանի վարած քաղաքականութիւնը հպատակ յերկրների նկատմամբ Հազկերտ Բ-ի ժամանակ:

Սոշոր հողային սեփականութեան աճումը և զարգացումը: Սոշոր հողատերերի (նախարարական աների ու վանքերի) գերիշխանութիւնը:

Ճորտային հարաբերութիւնների խորացումն ու զարգացումը: Շահադործման ուժեղացումը: Դասակարգային պայքարի նոր վերելք: Մծղնեականների շարժումը 440-ական թվականներին: Այդ շարժումը վորպես բորբոքիտոնների շարժման 2-րդ ետապը: Աշտիշատի ժողովը (443):

Մծղնեական շարժման ճնշումը:

Իննչպպուե՛ր Հայաստանում և նրա կատարած աշխարհադիրը: Արքունի հարկերի ծանրացումը: Նախարարների և հոգևորականների իրավունքների սահմանափակումը: Նախարարական պաշտոնների անցումը պարսիկների ձեռքը: Դժգոհութիւնները Հայաստանում, Վրաստանում և Աղվանքում ընդդեմ պարսկական տիրապետութեան:

Այդ յերկրների միացյալ զիմադրութիւնը Սասանյան Պարսկաստանի պահանջներին: 449 թվի կրոնափոխութեան

առաջարկը վորպես առիթ 451 թվի ապստամբութեան: Ապստամբութեան նախապատրաստումը Հայաստանում: Վաստին ու Վարդանը, պայքարն ապստամբութեան շուրջը: 451 թվի ապստամբութիւնը: Ապստամբութեան հետևանքները: Բյուզանդիոնի դիրքը ապստամբութեան նկատմամբ: Բուրժուական պատմագրութեան ապստամբութեանը տված գնահատութեան քննադատութիւնը:

Սասանյան արքունիքի վարած խիստ քաղաքականութեան ժամանակավոր մեղմաչումը ապստամբութեանից հետո: Պերոզը (457—484) և նրա վարած նոր քաղաքականութիւնը: Հարկերի ծանրացումը, դժգոհութիւնների խժոճումը Հայաստանում և Վրաստանում:

481—484 թ.թ. վրաց-հայկական ապստամբութիւնը: Հայ-վրաց-աղվանական միացյալ պայքարը պարսկական տիրապետութեան դեմ: 481—484 թվականների ապստամբութեան վախճանը և Սասանյան Պարսկաստանի վարած քաղաքականութեան փոփոխումը: 481—484 թ.թ. ապստամբութիւնը, վորպես հայերի, վրացիների և աղվանական ժողովուրդների պայքարն իրենց անկախութիւնը վերահաստատելու համար:

484 թ. Նվարսակի դաշնագրութիւնը և նրա նշանակութիւնը հայկական Ֆեոդալիզմի հետագա զարգացման համար:

Սասանյան Պարսկաստանը 5-րդ դարի վերջում և 6-րդ դարում: Սասանյան գինաստիլայի ճգնաժամը Կավթատ Ա-ի ժամանակ (488—531): Մաղղակյան շարժումը և Սասանյան միապետութիւնը: Մաղղակյան շարժման պատճառները: Պարսկաբյուզանդական կոնֆլիկտի տաղիւն շրջանը և 532 թ. դաշնագրութիւնը:

Արևմտյան Հայաստանը Յուստինյանոս կայսրի ժամանակ (527—565). Յուստինյանոսի օկֆորմները և նրանց հետևանքները: Ապստամբութիւնները Արևմտյան Հայաստանում: Բյուզանդական մասի Հայաստանը վորպես պրովինցիա:

Մարզպանական Հայաստանը 6-րդ դարում: Պարսիկ մարզպանները Հայաստանում: Պարսկաստանի նոր փորձերը Հայաստանը տնտեսապես և կուլտուրապես անջատելու արևմտյան աղղեցութիւնից: Դվինի յեկեղեցական ժողովը: Բաղքեղոնական դավանանքի մերժումը:

2409  
39  
2



Պարսկա-բյուզանդական պատերազմների 2-րդ շրջանը և 562 թ. դաշնագրությունը: Կալատի մոցրած հողաչափության ավարտումը Խոսրով Ա-ի (532—579) ժամանակ: Արքունի հարկերի շատացումը Հայաստանում:

Իրամական հարկերի մուծումը Պարսկաստանում և այդ հարկերի մուծման փորձերը Հայաստանում: 572 թ. ապստամբությունը Հայաստանում Սասանյան Պարսկաստանի տիրապետության դեմ, ապստամբության մասսայական բնույթը: 572 թ. ապստամբությունը վորպես փորձ Հայաստանը Սասանյան Պարսկաստանից ազատելու համար: Ապստամբության պարտությունը և պարտության պատճառները:

Պարսկա-բյուզանդական պատերազմների 3-րդ և 4-րդ շրջանները: 591—628 թ.թ. դաշնագրությունները և Հայաստանի յերկրորդ բաժանումը Բյուզանդիոնի և Պարսկաստանի միջև: Պարսկա-Բյուզանդական այդ կոնվենտների քայքայիչ ազդեցությունը Մերձավոր Արևելքի տնտեսական կյանքի վրա:

Հայաստանի տնտեսական կյանքը մարդկանցության շրջանում, առևտուրը, արհեստագործությունը: Իվինը վորպես մարդկանցական Հայաստանի վարչական ու տնտեսական կենտրոն: Միջազգային առևտուրը և նրա նշանակությունը Իվինի և Հայաստանի մյուս քաղաքների զարգացման համար: Քաղաքների զարգացման դանդաղությունը: Ներքին առևտրի թուլությունը: Արհեստների տեսակները և նրանց զարգացման թույլ աստիճանը:

Յերկրագործության մշակույթի զարգացման մակարդակը: ցածր տեխնիկա, յեռագաշտային սիստեմը: Շինական դասի գրությունը մարդկանցական Հայաստանում: Ճորտացման պրոցեսի ուժեղացումը: Աշխատավորական մասսաների տնտեսական դրության վատթարացումը և շահագործման խորացումը: Տեղական ֆեոդալների և արքունի հարկերը՝ հաս, սակ, բաժ, կու, պողի և բեգար:

Արդյունավճար սնտան իբրև շահագործման յեղանակի տիրապետող ձևը: Բնաօնտեսություն:

### բ) Կուլտուրան 5—7-րդ դարերում

Հայկական գրականության առաջացումն ու զարգացումը: Մատենագրություն (Ագոթթանդեղոս, Փալատոս, Բյուզանդ, Կորյուն, Փարպեցի, Յեղիշև, Խորենացի, Սեբեոս, Անանիա Շիրա-

կծացի): Կրոնական գրականություն:—Թարգմանչական (Աստված կաշունչ, Վոսկեբերան և այլն) և ինքնուրույն՝ վարքաբանական, ճառեր և այլն: Կրոնա-փիլիսոփայական գրականություն (Յեղիշև, Իսիթ Անհաղթ, Շարականներ): Ֆեոդալական իդեոլոգիայի գերիշխումը գրականության մեջ: Հունարան դպրոցը և նրա դերը հայկական լեզվի հարստացման գործում: Իրարար լեզուն:

Մարդպանական շրջանի պատմագրության նշանակությունը Հայաստանի և Մերձավոր Արևելքի ժողովուրդների պատմության ուսումնասիրության համար, կրոնական գրականության բացասական ազդեցությունը աշխարհիկ գրականության զարգացման վրա:

Ճարտարապետություն և նրա զարգացումը: Հրիփսիմե ու Ջվարթնոց յեկեղեցիները: Քաղաքացիական շենքերը: Ճարտարապետական արվեստի փոխազդեցությունը հարևան յերկրների հետ:

Արվեստը—Հեթանոսական շրջանի գուսանական խմբերը և գողթան յերգերը: Թատրոնական արվեստի վերացումը:

Բանդակագործությունը և նրա հանդես գալը ճարտարապետության հետ միասին: Նկարչական արվեստը: Ժողովրդի պարարվեստն ու ստեղծագործությունը:

### 6) ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅԻ ԳԵՐԻՇԻԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ (640—885)

ա) Արաբական խալիֆայի առաջացումը 7-րդ դարում

Արհեստների ու առեվտրի զարգացումը Արաբիայում նախքան իսլամի առաջացումը: Քարավանային ճանապարհները:

Արաբական վաճառականությունը: Իսլամ և նրա ծագումը: Արաբական թափառաշրջիկ ցեղերի կոնտրիբուցիան:

Արաբական խալիֆայի կազմակերպումը: Հողատիրության սիստեմը: Արաբական խալիֆայի նվաճումները Մերձավոր Արևելքում (632—641) և հետագա նվաճումները Արևմուտքում: Արաբական աշխարհակալության ծավալումը:

Արաբական աշխարհակալության պետական, զինվորական, վարչական ու տնտեսական կազմակերպվածության առանձնա-

հատկութիւնները: Մահճեղականութեան տարածման տնտեսական հիմքերը: Արաբական կուլտուրան և նրա ազդեցութիւնը հայկական կուլտուրայի վրա հետագա շրջանում:

### բ) Հայաստանի նվաճումը

Արաբների առաջին արշավանքները դեպի Հայաստան (640, 642—643 և 650) արշավանքների ավարտութեան և գերավարական բնույթը: Հայաստանի դիմադրութիւնը: Արաբների հաստատումը Հայաստանում (650): Բյուզանդական կայսրութեան փորձերը Հայաստանը պահելու իր իշխանութեան տակ: Հայերի դադթը դեպի Փոքր Ասիա: Խալիֆաթի և կայսրութեան պայքարը Հայաստանի շուրջ (640—655): Մուսավիայի և Թեոդորոս Ռշտունու միջև կնքած դաշնագրութիւնը (651):

Այդ դաշնագրութեան քաղաքական նպատակները:

Հայաստանն Ոմանյանների ատրապետութեան շրջանում (650—750): Գրեգոր Մամիկոնյանն իբրև Հայաստանի առաջին կառավարիչ արաբների կողմից (662—672):

Արաբ-բյուզանդական կռիւները 7-րդ դարի վերջում և Հայաստանի վերջնական նվաճումը արաբների կողմից (698): Ոմանյանների ներքին և արտաքին քաղաքականութիւնը. աւրաբ վոստիկանները Հայաստանում, վոստիկանների պարտականութիւնները: Մրվան վորպես առաջին արաբ վոստիկան (698—700). սրա վարած քաղաքականութիւնը: Ծանր հարկերի գանձումը և նախարարների ձերբակալումն ու աքսորը: Իժգոհութիւններ Հայաստանում, աքսոմաբութիւնը Խալիֆաթի դեմ (703): Վարդանկերտի պատերազմը: 703թ. ապստամբութիւնը վորպես փորձ արաբական գերիշխանութիւնից ազատվելու համար:

Կաշմ վոստիկանը Հայաստանում, հայկական զորքերի և նախարարների կոտորածը Նախիջևանում և Խրամում:

Դվինի ավերումը: Աբդուլ-Ազիզը և նրա «մեղմ» քաղաքականութիւնը. վախտակա՞ն հայերի վերադարձը:

Հայ շահագործող դասակարգի մերձեցումը Խալիֆաթի հետ: Խալիֆաթի ֆինանսական ծանր դրութիւնն ու հարկերի ծանրացումը Հայաստանում: Տեղական ֆեոդալների հարկերի շատացումը: 725 թ. Հերթի աշխարհապիւրը և զլխահարկի գանձումը ծխահարկի փոխարեն: Աշխատավորական մասսոյների նյութական դրութեան ծանրացումը:

Իսաակարդային պայքարի սրումը 720-ական թվականներին. Պավլիկյան շարժումը, շարժման ղեկավարների քարոզած գաղափարները: Շարժումը վորպես դյուղացիների մղած պայքարը ֆեոդալների դեմ: Գյուղացիական ապստամբութիւնները 726—727 թ.թ., ապստամբութեան պարտութիւնը: Արաբական խալիֆաթի քաղաքականութիւնը Պավլիկյան շարժման հանդեպ:

Ոմանյանների ղինաստիայի ճգնաժամը, ապստամբութիւնները Խալիֆաթի ներսում: Ապստամբութիւնը Հայաստանում ընդգեմ Խալիֆաթի (747—751). շիաների ուժեղացումը և Ոմանյանների անկումը (750). Խալիֆաթի բաժանումը յերկու մասի՝ Արեւելյան և Արեւմտյան: Արբասյան ղինաստիան Արեւելքում:

Հայաստանի տնտեսական կյանքի վարզացման աննպատակ արշմանները 7—8 դարերում: Հայաստանը վորպես Խալիֆաթի ռազմ-ստրատեգիական ֆորպոստ: Հայաստանի քաղաքները կորցնում են իրենց առևտրա-արհեստագործական նշանակութիւնը և վերածվում արաբական խալիֆաթի համար ռազմավարչական կենտրոնների: Յերկրի բնակչութեան նյութական դրութեան վատթարացումը, դյուղի շահագործման սաստկացումը զերքին և արտաքին իշխողների կողմից: Ծանր հարկերը և բնակչութեան աղքատացումը:

Արբասյան ղինաստիայի ներքին և արտաքին քաղաքականութիւնը առաջին խալիֆների (Ալ-Մաֆֆա 750—754, Ալ-Մանսուր՝ 754—775, Ալ-Մահադի՝ 775—786 և Հարուն-Ալ-Ռաշիդ՝ 786—809) ժամանակ. Հայաստանի ապստամբութեան ճնշումը և արաբական կայսրոները Հայաստանում:

Խալիֆաթի խիստ քաղաքականութիւնը Հայաստանում Յեզիդ, Հասան և Բեքիր վոստիկանների ժամանակ: Ընդհանուր և մասսայական խոր դժգոհութիւնները Հայաստանում ընդգեմ Խալիֆաթի: 772—775 թ.թ. ապստամբութիւնը Հայաստանում: Արաբական զորքերի դուրս քշումը յերկրից. ապստամբութեան համաժողովրդական բնույթը: Այդ ապստամբութիւնը վորպես հայ ժողովրդի մղած պայքարը Խալիֆաթի դեմ իր քաղաքական ազատագրութիւնը ձեռք բերելու համար: Ապստամբութեան պարտութիւնը և Հայաստանի ավերածութիւնը արաբական զորքերի կողմից:

Արաբական խալիֆաթի հարկային քաղաքականութիւնը,

հարկերի դանձման ձևով, դրամական և հողային հարկեր, Խալիֆաթի վարած քաղաքականությունը Հայաստանի սահմանների ուժի թուլացման գործում: Խալիֆաթը և Բագրատունի նախարարությունը:

Արաբական խալիֆաթի քայքայման պրոցեսը 9-րդ դարի ընթացքում: Առանձին ֆեոդալների ուժեղացումը Խալիֆաթի սահմաններում: Ապստամբությունները Խալիֆաթի դեմ (Պարսկաստանում), դասակարգային պայքարի սրումը Միջագետքում: Խալիֆաթի փոքրերը վերականգնելու իր նախկին հզորությունը: Ապստամբությունների ճնշումը և Աբուսեիթի պատժիչ արշավանքներն Ատրպատականում, Հայաստանում և Փոքր Ասիայում: Հարկային խիստ քաղաքականության կիրառումը հպատակ յերկրներում: Ասպատակությունները և դերավարությունը Հայաստանում: 850—52 թ.թ. ապստամբությունը Սասունում, Մշում, Վասպուրականում և Հայաստանի այլ գավառներում: Ապստամբության ժողովրդական բնույթը: Խուլթը վորպես ապստամբության կենտրոն: Այս ապստամբությունը վորպես հիմք «Մասնա Ծանրը» վեպի: Յերկրի ասպատակումը և բնակչության դերավարումը:

## 7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ ԽԱԼԻՖԱԹԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՅԵՎ ՀԱՅԱՎԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

ա) Բագրատունի հարսությունը (885—1045)

Աշոտ Բագրատունին Հայաստանի կառավարիչ (855) և «Իշխանաց իշխան» (859—885):

Խալիֆաթի համեմատաբար մեղմ քաղաքականությունը Հայաստանում 9-րդ դարի կեսերին: Հայաստանին քաղաքական ինքնուրույնություն ապառ խնդիրը: Այդ ձևով Խալիֆաթը ձգտում էր Հայաստանը դարձնել վորպես պատնեղ ընդդեմ Բյուզանդիայի: Հայաստանի անտեսական կյանքի ստորձանական աշխուժացումը 9-րդ դարի կեսերից սկսած: Առեվտրական ճանապարհների աշխուժացումը:

Բագրատունի դուրս յեկած Հյուսիսային գծի անցումը Հայաստանի վրայով և նրա ազդեցությունը Հայաստանի քաղաքների զարգացման վրա: Կայազորների, ամրոցների և գյուղաքա-

ղաքների քաղաքացիական պրոցեսը Բագրատունի զարգացումը և զարգացման ազդակները: Արտագրողական ուժերի առաձայնական զարգացումը:

Արաբական խալիֆաթի ներքին քայքայումը, բյուզանդական հաղթական արշավանքները և Խալիֆաթի թուլացումը: Աշոտ «Իշխանաց իշխանի» անբախտությունը Հայաստանում ստեղծված քաղաքական նպաստավոր պայմանների շնորհիվ և Հայաստանի ձգտումը քաղաքական անկախություն ձեռք բերելու համար:

Բագրատունի թագավորության հիմնումն Աշոտ Ա-ի (885 թ.) ժամանակ: Նրա վարած ներքին և արտաքին քաղաքականությունը: Ֆեոդալական ուժերի համախմբումը և բարեկամական հարաբերությունների հաստատումը հարևան յերկրների (Վրաստանի, Աղվանքի) հետ:

Արհեստների անջատումը գյուղատնտեսությունից, քաղաքների առաջացումն ու զարգացումը, քաղաքները վորպես առեվտրի և արհեստների կենտրոններ: Աշխատանքի բաժանումը քաղաքի և գյուղի միջև: Բագրատունի շուկայի առաջացումը և փոխանակության զարգացումը:

Միջազգային ստեղծարական ճանապարհների աշխուժացումը Հայաստանում: Առեվտրական ճանապարհների բացումը դեպի Բյուզանդիա:

Սմբատ Ա-ի (889—914) և Ատրպատականի Աֆշին ու Յուսուֆ փոխարքաների պայքարը: Բագրատունի թագավորության ճյուղատուները Հայաստանի ամբողջությունը իրեն յինթարկելու համար: Արժրունի և Մյունյաց նախարարությունների դիմադրությունները: Այդ հակամարտության սպառնալից Յուսուֆի կողմից: Արժրունի թագավորության հաստատումը Վասպուրականում (908), Յուսուֆի արշավանքները դեպի Հայաստան և յերկրի ավերումը:

բ) Գյուղացիական շարժումներ: Թոնդրակյան շարժման 1-ին ետապը

Գյուղացիությունից յուսութական ծանր վիճակը 10-րդ դարի սկզբներին: Այդ ծանր դրությունը վորպես հետվանք ծանր հարկերի և արտաքին ու ներքին կոտորածների: Սմբատ Զարեհավանցին ու Թոնդրակեցիների սկզբնավորումը:

Շարժման ծավալումը 10-րդ դարի առաջին յերկու տասնամյակներում: Դյուլզացիական պայտամբուխումը Արարատյան դաշտում և Սյունիքում: Ապստամբության շարժիչ ուժերը, ապստամբության պարտութունը և պարտության պատճառները:

#### զ) Հայաստանի տրոհումը մանր բազավորությունների (10-րդ դար)

Յուսուֆի նոր արշավանքները և Աշոտ 2-րդի համառ դիմադրութունները, նրա ձգտումները ստեղծելու կենտրոնացած ուժեղ պետութուն ընդդեմ Արարիայի: Պարսկա-արաբական բանակի վերջնական պարտութունը և Հայաստանի հիմնական մասերի ազտագրումն արաբական ամիրայությունից: Բագրատունիների քաղաքական ձգտումների չիրականանալը և նրանց ամփոփելն Արարատյան և Գուգարաց նահանգներում:

Արբասի (928—951) մղած պատերազմը արբասյան դեմ: Աշոտ Գ. (951—977) և Անին Բագրատունիների մայրաքաղաքը: Կնրսի թագավորության առաջացումը (968): Համեմատարար լազաղ ժամանակաշրջան 'և անտեսական կյանքի վերելքը, Շինարարական աշխատանքների ծավալումը, ճարտարապետական կառուցումները: Սյունյաց թագավորության հիմնումը (970)— Կապան մայրաքաղաքը: Սմբատ Բ. (977—990) և կառուցումները Անի Բաղաբում: Կռիվները Կարսի թագավորության հետ: Բյուզանդիայի առաջխաղացումը Անդրկովկաս: Հայաստանի և Վրաստանի միացյալ դիմադրութունը Բյուզանդիոնի դեմ: Կյուրիկյան թագավորության կազմակերպումը (988):

Գագիկ Ա. (990—1030) և Անիի Շիրակյան Բագրատունի թագավորության ամրապնդման ջանքերը:

Հայաստանի անտեսական կյանքի վերելքը 10—11-րդ դարերում: Դյուլզանտեսության դարգացումը, ջրանցքաշինարարութունը: Արճեստների դարգացումը, ներքին առևտրի ծավալումը: Հին քաղաքների արագ դարգացումը և նորերի առաջացումը (Անի, Կարս, Դվին, Արծն, Կարին, Խրաթ, Մանազկերտ, Արճեշ, Բերկրի, Վան, Վոստան և այլն):

Այս քաղաքների մեջ Անին, Դվինը, Կարսը, Խրաթը և Մանազկերտը, վերպես վաճառաչան քաղաքներ: Անի քաղաքի նոր կառուցումները Գագիկի ժամանակ: Վաղխառուական կապի-

տալի դարգացումը և հարստության կուտակումը քաղաքներում: Անի քաղաքի նկարագրութունը, վերպես միջնադարյան քաղաքի: Բաղաքային բնակչութունը, նրա դասակարգային կազմը, քաղաքային դասի առաջացումը: Բաղաքների վարչաձևը: Բաղաքի և գյուղի միջև ստեղծված ներհակության ուժեղացումը: Բաղաքների պայքարը ֆեոդալների դեմ:

Հայաստանի վրայով անցնող առեվտրական ճանապարհները 9—11-րդ դարերում, արանդիտային առեվտուրը: Հայաստանից արտահանվող և Հայաստան ներմուծվող ապրանքները:

Դասակարգային փոխհարաբերութունները 10—11-րդ դարերում.—խոշոր հողատիրության տիրապետումը, մանր հողատերերի ուստիճանական հողազրկումը: Դյուլզացիության իրավաքաղաքական դրութունը.—նրա անձնական կախվածության խտացումը, շահագործման ուժեղացումը: Թոնդրակեցիների շարժման 2-րդ հոսսը (990—1010), շարժման կենտրոնները, ծավալումը և նրա մասսայական բնույթը: Թոնդրակեցիների առաջադրած խնդիրները: Թոնդրակեցիների շարժումը, վերպես գյուղացիության և քաղաքային դասի պայքարը ընդդեմ ֆեոդալների: Շարժման ժամանակավոր պարտությունը:

#### դ) Բագրատունի հարստության անկումը

Բյուզանդական կայսրության նվաճումների ծավալումը 11-րդ դարի առաջին քառորդում: Բյուզանդիոնի վարած քաղաքականութունն Արևելքում և սահմանակից մանր իշխանութունները նվաճելու ձգտումը: Գաղթն ու տեղեկանումները վերպես միջոց այդ նպատակի իրագործման համար: Վասիլ Բ. (977-1025) և նրա արշավանքները: Տայքի միացումը Կայսրությանը (1003): Արծրունի թագավորության տեղահանումը և բնակչության գաղթեցումը դեպի Փոքր Ասիա: Վասպուրականի միացումը Բյուզանդիային (1016—1021):

Գագիկ առաջինի մահը և Բագրատունի հարստության ճգնաժամը: Աշոտ և Հովհաննես-Սմբատը (1020—1041) ու նրանք յերկադառակութունները Հայաստանում: Վասիլ Բ-ի կռիվները Վրաստանի և Արխաղների հետ: Հովհաննես-Սմբատի ոգնությունը վերջիններիս: Վրաստանի պարտությունը և Հովհաննես-Սմբատի կտակը: Բաղաքական հոսանքների առաջացումն Անիում:

Հովհաննես-Սմբատի մահը և Բյուզանդիոնի ձգտումն Անին գրավելու համար: Քաղաքական հասանքների պայքարն այդ խնդրի շուրջը: Գագիկ Բ. (1042—1045) և քաղաքի անկախութունը պաշտպանող հոսանքի հաղթանակը Բյուզանդիոնի և ներքին սեպերի ուժերի դեմ: Բյուզանդիոնի վերջերս Անին բռնի կերպով գրավելու համար: Քաղաքի ազգաբնակչության համառ պայքարը քաղաքը պաշտպանելու համար: Անիի գրավումը Բյուզանդիոնի կողմից (1045):

Բյուզանդական կայսրութեան տիրապետութեանն Անիում, Վասպուրականում և Հայաստանի այլ մասերում: Գաղթ և տեղահանութեանները—Հայաստանի սոցիալական ուժի թուլացումը: Բյուզանդական կայսրութեան հարկային խիստ քաղաքականութեանն Անդրկովկասում: Իժգոհութեանների առաջացումն աշխատավոր ժողովուրդի մեջ: Թոնդրակեցիների շարժման Յ-րդ հոսանքը, նրա աշխուժացումը 1047—1052 թվականներին: Բյուզանդական սոցիալական ուժի և հայ ֆեոդալների հալածանքները թոնդրակեցիների դեմ և շարժման պարտութեանը:

### Ե) Կուլտուրան 7—11-րդ դարերում

Գրականութեանը.—Պատմագրութեանը և պատմագիրները (Ղևկոնդ, Կաղականդկեցի, Շապուհ Բագրատունի, Ուխտանես, Իրախանակեցի, Թովմա Արծրունի, Ստեփանոս Ասողիկ և Արիստակես Լաստիվերացի): Կրոնական սիրտաստիկ դատողութեանների ազդեցութեան ուժեղացումը պատմագրութեան մեջ: Հայկական մատենադրութեան նշանակութեանը Մերձավոր Արևելքի պատմութեան ուսումնասիրութեան համար: Կրոնական գրականութեանը՝ շարականները, ներբողները, մեկնութեանները, վարքաբանութեանը (Ստեփանոս Սյունեցի, Հովնան Ոճնեցի):

Կրոնա-փիլիսոփայական գրականութեանը՝ Գրիգոր Մազիստրոս: Ինդովիստական գրականութեան սկիզբը (Գրիգոր Նարեկացի): Գրականութեան միասնիկ բնույթը: Ժողովրդական բանահյուսութեանը (Վաստուցի Դավիթ): Յերգն ու պարարչասարք:

Արվեստի և ճարտարապետութեան ծաղկումը: Քանդակագործութեանը, նկարչության և մանրանկարչութեան զարգացումը, գիրքը և գրքի նկարագրողությունը—զբնագիրներ:

Միասնիցիզմի ուժեղացումը կուլտուրայի բնագավառում:

Վորպես սեպերի ընդդեմ թոնդրակեցիների և քաղաքային կյանքի զարգացման:

Սքաբական, բյուզանդական և հարևան ժողովուրդների կուլտուրայի՝ գրականութեան, ճարտարապետութեան և գիտութեան կապն ու փոխազդեցութեանը հայկական կուլտուրայի հետ այդ շրջանում:

### Ց. ՍԵԼՉՈՒԿ-ԹՈՒՐԲԵՐԻ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ ՅԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱՎՈՒՄԸ

Հայաստանի քաղաքական կացութեանը սելջուկ-թուրքերի արշավանքների նախորդակին: Սելջուկ-թուրքերը և նրանց բնակած յերկիրը, նրանց զրադուսքը, սոցիալական հարաբերութեանները: Թուրքական ցեղերի կռիվները և նրանց սատիճանական համախմբումը: Նրանց առաջխաղացումը դեպի Արևմուտք՝ Առաջավոր Ասիա: Առաջավոր Ասիայի քաղաքական նպաստավոր պայմանները սելջուկ-թուրքերի առաջխաղացման համար:

Սելջուկների արշավանքները և Դաղնայի սարուկտեղիների իշխանութեան պարտութեանը: Սելջուկների արշավանքները Խորասանում (1030—1040 թ. թ.): Տուղրիլի արշավանքներն Իրանի հյուսիս-արևմտյան և Չաքերին՝ հարավ-արևմտյան մասերում, Իրանի նվաճումը, Բաղդադի գրավումը Տուղրիլի կողմից: Սելջուկ-թուրքերի սուլթանութեան կազմակերպումը:

Սելջուկ-թուրքերի մուտքը Հայաստան: Իբրահիմ Յանալի և Գթլուշի առաջին յերկու արշավանքներն (1048—1049) ու Արծն քաղաքի ավերումը: Բյուզանդական կայսրութեան վիճակը սելջուկների արշավանքների ժամանակ: Բյուզանդիան և հայերը՝ ծանր հարկերի գանձումը, ընդհանուր զժգոհութեանը Հայաստանում ընդդեմ կայսրութեան:

Տուղրիլ Երկու արշավանքը դեպի Հայաստան (1054) և յերկուրի ստպատակումը, Մանազկերտ քաղաքի դիմադրութեանը: Ալի-Արսլանի (1063—1072) արշավանքը Հայաստանի վրա և Անի քաղաքի ավերումը (1064): Վրաստանի, Աղվանքի, Սյունիքի, Չորագետի և Կարսի թագավորութեանների հպատակվելը Ալի-Արսլանին: Խոսովութեաններն Իրանում Ալի-Արսլանի դեմ և

նրա արշավանքը դեպի Փոքր Ասիա: Մանազկերա քաղաքի ավերումը, կռիվները Բյուզանդիոնի դեմ և Կայսրութեան պարտութիւնը (1071): Հայաստանի ասպատակումն ու ավերումը սելջուկյան բանակների կողմից և յերկրի ազգաբնակչութեան արտագաղթը դեպի Փոքր Ասիա և Միջերկրականի ափերը: Հայաստանի տնտեսական կյանքի ընդհանուր անկումը: Բնակչութեան ծանր դրութիւնը և աղքատութիւնը: Սելջուկյան աշխարհակալութեան հաստատումն Առաջավոր Ասիայում: Մելիքշահը (1072—1092) և Փոքր Ասիայի վերջնական նվաճումը:

Նվաճված յերկրների վարչական ձեւը, Ֆեոդալական առանձնահատուկ սիստեմը Սելջուկյան տիրապետութեան շրջանում: Միասնական և հողային խնդիրը. խոշոր հողատիրութեան փոխարինումն իկտաների: Գյուղացիութեան իրավա-քաղաքական դրութիւնը: Մելիքշահի տված արտոնութիւնը հայ յեկեղեցուն (հարկերից ազատելը):

Մելիքշահի տիրապետութեան համեմատական խաղաղ շրջանը: Հայաստանի տնտեսական կացութեան վերականգման փորձերը: Ազգաբնակչութեան վորոշ մասի վերադարձը Հայաստան:

Մելիքշահի մահը: Սելջուկյան պետութեան քայքայման պրոցեսը, կենտրոնախույս ուժերի աշխուժացումը: Սելջուկյան պետութեան անկումը և մանր իշխանութիւնների առաջացումն Առաջավոր Ասիայում: Հայաստանում տնտեսական կյանքի և կուլտուրայի անկումը սելջուկների տիրապետութեան ժամանակ:

## 9. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԶԱԲԱՐՅԱՆՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Սելջուկյան աշխարհակալութեան անկումը: Հայաստանի քաղաքական կացութիւնը Սելջուկյան աշխարհակալութեան անկումից հետո: Զորագետի Բագրատունի և Սյունիքի Կապանի իշխանութիւնները: Սելջուկ-արաբական ամիրայութիւնները Հայաստանում և Անդրկովկասում:

Գանձակի՝ Ատրպատականի Սելջուկյան ամիրայութիւնը և Սյունյաց Կապանի իշխանութիւնը: Իվին-Անիի Շեղադյանների ամիրայութիւնը: Շահարմենների ամիրայութիւնը Մանազկերտում և Խլաթում: Դանիշմանները և Արտուխյան սելջուկյան

ամիրայութիւնները:

Կենտրոնական իշխանութեան բացակայութիւնը Հայաստանում:

Վրաստանը 12-րդ դարում և 13-րդ դարի առաջին քառորդում: Հայերի և Կովկասյան ժողովուրդների համախմբումը Վրաստանի շուրջը ընդդեմ ամիրայութիւնների: Անի քաղաքի բնակչութեան ապստամբութիւնը Շեղադյանների դեմ (1124) և Վրաստանի առաջխաղացումը:

Հայերի գաղթն ամիրայութիւնների շրջանից դեպի Հայաստանի հյուսիսային կողմերը և Վրաստան: Անին կրկին Շեղադյանների գերիշխանութեան ներքո:

Վրաստանի հզորութիւնը Գեորգի Գ-ի ժամանակ (1158—1184) և Անիի ու Իվինի գրավումը (1161—1162):

Հայաստանի փորձերը ազատագրվելու ամիրայութիւնների գերիշխանութիւնից: Փանկեվանների դինաստիան Գանձակում և Ատրպատականում: Համաամիրայական կենտրոնական ճակատի ստեղծումը ընդդեմ Վրաստանի:

Վրաստանի ժամանակավոր պարտութիւնը (1163): Շեղադյանները նորից Իվինում և Անիում: Սյունյաց Կապանի թագավորութեան նվաճումը Փանկեվանյանների կողմից (1170):

Վրաստանի քաղաքական ուժերի նոր դասավորումը 1170-ական թվականներին: Գեորգի Գ-ի նոր նվաճումները: Անի քաղաքի վերջնական գրավումը Շեղադյաններից (1173):

Իվանե Որբելյանն Անիի կառավարիչ: Ապստամբութիւնները Վրաստանում Գեորգիի դեմ Իվանե Որբելյանի գլխավորութեամբ (1177): Ապստամբութեան ճնշումը և Որբելյան տոհմի կոտորածն ու կալվածների հանձնումը Զաքարյաններին: Որբելյան իշխանների մնացորդների փախուստը դեպի Վայոց ձոր և Սյունիք (1180): Զաքարյանների հզորացումը:

Զաքարյանները՝ Ապասալարները Լոսիում և Շիրակում: Որբելյանները Վայոց ձորում և Սյունիքում:

Վրացական պետութեան ընդարձակումը 12-րդ դարի վերջին և 13-րդ դարի առաջին քառորդում: Թամար թագուհին (1184—1212) և Վրաստանի հզորացումը:

Ապասալարները վերադառնալով Վրաստանի վասալ իշխաններ: Հյուսիսային Հայաստանի քաղաքական կյանքի վերականգնումը Ապասալարների ժամանակ:



Շահարմենների անկումը և Յեգիպտոսի եյուրջյան ամիրայ-  
նության հաստատումը Հայաստանի հարավում 13-րդ դարի  
սկզբին: Վրաստանի պատերազմները եյուրջյանների հետ (1207—  
1211) և հաշտության կնքումը:

Հայաստանի սոցիալ-տնտեսական դրությունը 12—13-րդ  
դարերում: Փեռզախների և յեկեղեցականների կալվածատիրա-  
կան նախկին իրավունքների վերականգնումը: Յեկեղեցու կալ-  
վածների մեծացումը և քաղաքական իրավունքների ընդարձա-  
կումը: Յեկեղեցու միջամտելն աշխարհիկ գործերին: Վանքային  
կալվածների մշակման ձևեր:

Գյուղացիության տնտեսական և քաղաքական դրության  
ծանրացումը 12—13-րդ դարերում: Շահագործման խստացումը:  
ձորտական իրավունքի ուժեղացումը: Կոռ ու բեգարի  
կիրառումը: ձորտերի նվիրումն ու վաճառումը:

Կոռ ու բեգարի և նատուրալ հարկերի ու տուրքերի ուժե-  
ղացումը:

Քաղաքների ու քաղաքային կյանքի զարգացումը: Արհեստ-  
ների և տնայնագործության նոր թափը քաղաքում և գյուղում:  
Արհեստների ճյուղավորումը: Արհեստավորական արտադրանքը  
վոչ միայն նեղ տեղական ֆեոդալներին, պարոնների կարիքների  
համար, այլ իբրեւ ներքին և արտաքին շուկաների կարիք-  
ները բավարարող արտադրանք: Հայաստանի առեւտրի գլխավոր  
ճանապարհները. Հայաստանով անցնող միջազգային առեւտրի  
ուղիները:

Առեւտրա-վաճառուական կապիտալի զարգացումը. յեկե-  
ղեցին՝ վաճառու. ներքին շուկայի լայնացումը, առեւտրական  
կապիտալի թափանցումը գյուղում: Գյուղատնտեսության մշա-  
կումը և նրա ձևերը: Գյուղատնտեսական մթերքների վաճառա-  
հանման յերկուսթի զարգացումը: Տոնավաճառները: Քաղաքնե-  
րի պայքարը ֆեոդալներին դեմ. քաղաքային արիստոկրատիան և  
քաղաքային վարչությունը: Անիի քաղաքային խորհուրդն իբ-  
րեւ քաղաքային դասի ինքնավար որդան ֆեոդալական կառա-  
վարչի կողքին: Փեռզախական քաղաքի կենցաղը: Համքարու-  
թյունների առաջ գալը Անիում և այլ քաղաքներում: Վարպետ-  
ները, վարպետացուները և աշակերտները. սրանց պայքարը:  
Համքարական արհեստն ու լսեխնիկան:

## 10. ԿԻԼԻԿՅԱՆ ՇՐՋԱՆ (1095—1375)

Կիլիկիայի ընաշխարհը. բնակչության ազգային և դասա-  
կարգային կազմը: Հայ ֆեոդալները Փոքր Ասիայում:

Հայերի և Բյուզանդիայի թշնամական դերը Փոքր Ասիա-  
յում և Կիլիկիայում: Խաչակիրների արշավանքները և Կիլիկիայի  
հայ թագավորության կազմավորումն ու զարգացումը: Կիլիկիայի  
պայքարն ամիրայությունների և սուլթանությունների դեմ իր  
անկախության պահպանման համար: Կիլիկիայի ֆեոդալիզմի ա-  
ռոնձնահատկությունները: Կիլիկյան թագավորության մասնակ-  
ցումը խաչակիրների արշավանքներին: Կիլիկյան թագավորու-  
թյան առեւտրական և կուլտուրական կապը Հայաստանի հետ:

Կիլիկիայի տնտեսության և առեւտրի զարգացումը Յեվրո-  
պայի ազդեցության ներքո: Վենետիկի և Ջենովայի առեւտրա-  
կան լայն հարաբերությունների զարգացումը Միջերկրական  
և Սև ծովերի ավազանում: Կիլիկիայի առեւտրական կապն Արեւմ-  
ուտքի և Արեւելքի հետ: Կիլիկիայի քաղաքները և նրանց  
բնույթն ու ազգաբնակչության սոցիալական կազմը: Արհեստ-  
ները և նրանց տեսակները: Կիլիկիայի գյուղատնտեսությունը:  
Սոցիալական հարաբերությունները Կիլիկիայում, — խոշոր ազնվա-  
կանությունը: Առեւտրա-վաճառուական լգասը: ձորտ-գյուղա-  
ցիությունը և արհեստավորները: Գյուղացիական և արհեստա-  
վորական ապսամբությունները Կիլիկիայում: Կիլիկիայի թագա-  
վորության ու Յեգիպտոսի միմյուրյան Սուլթանության պայ-  
քարը: Կիլիկիայի թագավորության անկումը:

Կիլիկիայում ստեղծված հայկական կուլտուրան և նրա  
նշանակությունը:

## 11. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄՈՆԳՈԼԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿ (1236—1342)

Մոնղոլների բնակավայրը և կենցաղը: Մոնղոլական ցեղե-  
րի կոիվները և նրանց կոնսոլիդացիան: Մոնղոլական պետու-  
թյան կազմակերպումը (1203) Տեմուչինի գլխավորությամբ:

Զինաստանի նվաճումը (1215): Մոնղոլների առաջին արշավանքները դեպի Առաջավոր Ասիա և Ռուսաստան. Բատու զորավարը և Վոսկե Որդայի ստեղծումը: Խվարեզմի Ծան-Ջալալիդինի արշավանքները դեպի Հայաստան (1225—1232): Առաջավոր Ասիայի նպաստավոր պայմանները մոնղոլների արշավանքների համար—կենտրոնական իշխանության բացակայությունը, Վրաստանի թուլացումը:

Զարմազան և մոնղոլների յերկրորդ արշավանքը դեպի Անդրկովկաս (1236—1242), Որբելյանների հպատակությունը մոնղոլներին և ոգնությունը նրանց Վրաստանը և Սպասալարների յերկրամասը նվաճելու համար: Վրաստանի և Սպասալարների համառ պայքարը մոնղոլների դեմ:

Վրաստանի և Հյուսիսային Հայաստանի նվաճումը մոնղոլների կողմից. Անիի զրավումը և կողոպուտը: Կարսի հպատակությունը: Մոնղոլների ասպատակություններն Անդրկովկասում և յերկրի ավերումը:

Մոնղոլական նոր արշավանքներ (1242—1252): Բաչու զորավարը և Փոքր Ասիայի նվաճումը: Կարին քաղաքի զրավումը (1242): Զիմանկատուկի ճակատամարտը և Իկոնիայի սուլթանության սրբաբուխությունը: Փոքր Ասիան Բաչուի գերիշխանության ներքո: Փոքր Ասիայի ասպատակումը, ավերումն ու գերեզմարությունը: Կիլիկյան թագավորությունը և մոնղոլները, Հեթում Ա-ի դաշինքը Բաչուի հետ (1243):

Մոնղոլների հարկային խիստ քաղաքակառուցությունը Բաչուի ժամանակ: Դժգոհությունները մոնղոլների դեմ:

Վրաստանի և Սպասալարների կազմակերպած ապստամբության հայտնաբերումը մոնղոլների կողմից (1348—1349): Դավառներում բռնկված ապստամբությունները մոնղոլների դեմ, ապստամբությունների արյունալի ճնշումը: Դավիթ Մարեցու շարժումը:

Մոնղոլների 3-րդ արշավանքը (1352—1360):

Հուլաուն և Բաղդադի զրավումը, Մոնղոլական արշավանքների ավարտումը և Հուլաունի եղանակության կտրվումը: Հայաստանը եղանակության մի մաս:

Մոնղոլների վարած քաղաքակառուցությունը նվաճված յերկրներում.— տեոոր, մասսայական սպանություններ, գերեզմարություններ:

րուսթյուն և ծանր հարկերի դանձումը՝ նատուրայով և զրամով: Մարքսը մոնղոլների կիրառած քաղաքականության մասին: Հայաստանի տնտեսական կյանքի անկումը և բնակչության աղքատացումը: Տեղական ֆեոդալների ուժեղացումը և ֆեոդալական նոր անների առաջացումը:

Ֆեոդալական և պետական հարկերի ծանրացումը աշխատավորության վրա: Մասսայական դժգոհություններն աղքատ բնակչության մեջ:

Քրդուների աշխարհագիրը և մոնղոլների հարկային նոր քաղաքականությունը: Մահմանված հարկերի տեսակները: Ծանախների նշանակումը: Տեոորի սեփմի սաստկացումը:

Հայերի և վրացիների միացյալ ապստամբությունը մոնղոլների օրապետությունից դեմ (1261): Ապստամբության ճնշումը և յերկրի ասպատակումը: Մոնղոլների սված արտոնությունները յեկեղեցուհու: Հողային կալվածների կենտրոնացումը յեկեղեցիների և վանքերի ձեռքին:

Քաղաքների հետզհետե անկումը Հայաստանի հյուսիսային մասում և բնակչության արտագաղթը:

